ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/23

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի 25.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/23 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 25.07.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2017թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը: Նույն արձանագրության 3-րդ կետով որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկություն անել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

04.07.2017թ. ժամը 10.00-ին ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով կատարվել է «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացում: Հայտեր են ներկայացրել երկու ընկերություններ՝

- «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ 11 837 952 ՀՀ դրամ ընդհանուր գնային առաջարկով,

- «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն՝ 14 953 680 ՀՀ դրամ ընդհանուր գնային առաջարկով:

13.07.2017թ. «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն դիմել է «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող փաստաթղթերը իրեն տրամադրելու խնդրանքով: 14.07.2017թ. Պատվիրատուի կողմից վերը նշված փաստաթղթերը տրամադրվել են «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ին:

Այնուհետև, «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն 17.07.2017թ. թիվ 67 գրությամբ դիմել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, ներկայացնելով «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող փաստաթղթերում իր կողմից հայտնաբերված խախտումները, սխալները և անհամապատասխանությունները, ինչի հետևանքով ՊՈԱԿ-ը «Մասնագիտական փորձառություն» չափանիշով չի բավարարում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը պետք է գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվի «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պահանջներին չբավարարող և մերժվի:

Վերը նշված գրությամբ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն նշել է, նաև որ «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նմանատիպ են համարվում գործող էլեկտրակայաններում ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների կատարված լինելը, իսկ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների

կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացված փաստաթղթերով գործող էլեկտրակայաններից ներկայացրել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից երկու պայմանագրեր, որոնցից 06.05.2017թ. կնքված N02/062 պայմանագրով կատարված աշխատանքների վերաբերյալ որևէ տվյալ չի ներկայացրել, հետևաբար այն ընդհանարապես չի կարող դիտարկվել կամ քննարկվել որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող բավարար փաստաթուղթ, իսկ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտությունների ծառայությունների ձեռքբերման 17.06.2016թ. №03/134 պայմանագրով ներկայացրել է հաստատված տվյալներ կատարված աշխատանքների վերաբերյալ ընդամենը 11 ամիսների համար, ընդհանուր 1 961 300 դրամ գումարով, իսկ 12-րդ ամսվա հարկային հաշիվը հաստատված չէ և չկա նաև հանձնման-ընդունման ակտը:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, որպես նմանատիպ ներկայացրել է նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ կնքված 03.06.2016թ. N 067 պայմանագիրը, որով կատարված ջրի և/կամ հողի նմուշների փորձարկումները ոչ մի կերպ չի կարելի դիտարկել «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերում նշված նմանատիպ աշխատանք, քանի որ այն գործող էլեկտրակայանում չի կատարվել:

«ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նմանատիպ համարվող կատարված աշխատանքների ընդհանուր գումարը ըստ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող փաստաթղթերի կազմել է ընդհանուր 1 961 300 ՀՀ դրամ, որը սակայն պակաս է Ընթացակարգի շրջանակներում «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկի՝ 11 837 952 ՀՀ դրամ, 20% և/կամ 50%-ից, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը որակի անբավարար և նրա հայտը մերժի, ինչը սակայն հանձնաժողովը չի կատարել:

«ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հակասելով ՝իր իսկ կողմից «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17»

ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված պայմաններին, որպես նմանատիպ է համարել նաև «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև կնքված 03.06.2016թ. N067 պայմանագրով կատարված աշխատանքները, ինչը հակասում է Հրավերի պայմաններին, քանի որ Ընթացակարգի Հրավերով նմանատիպ են համարվում գործող էլեկտրակայաններում ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների կատարված լինելը, իսկ պղնձամոլիբդենային կոմբինատը, ակնհայտ է, որ գործող էլեկտրակայան չէ: Ստացվում է, որ Պատվիրատուն, սահմանափակելով հնարավոր մասնակիցների քանակը՝ գործող էլեկտրակայաններում կատարված աշխատանքներ ունենալու պայմանով, ներկայացված հայտերը գնահատելիս, իր իսկ կողմից Հրավերով սահմանված պայմանի բավարարումը անտեսել է՝ խախտելով գնումների ողջ գործընթացի նպատակը և գաղափարախոսությունը: քանի որ, եթե գնանշման հարցման Հրավերում գործող էլեկտրակայաններում կատարված աշխատանքներ ունենալու պայման չլիներ, գնանշման հարցման մասնակիցները կարող էին լինել ավելի շատ, բացի այդ, մասնակիցների գնային առաջարկներն էլ հնարավոր է լինեին ավելի ցածր՝ մասնակիցների կողմից հաշվի առնելով ակնկալվող սուր մրցակցությունը:

«Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև կնքված 03.06.2016թ. N067 պայմանագիրը և կից հարկային հաշիվներն ու հանձնման-ընդունման ակտերը պարունակում են բազմաթիվ սխալներ և անհամապատասխանություններ, որոնք հակասում են բուն պայմանագրի դրույթներին, բացի այդ դրանցում առկա են հարկային օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց համար սահմանված են նաև համապատասխան տույժեր:

Այսպես, պայմանագրի համարը թվով 13 հատ բոլոր Հարկային հաշիվներում նշված է սխալ:

16.06.2016թ. և 19.08.2016թ. Հարկային հաշիվները դուրս են գրվել 11.07.2016թ.-ի ԱԿՏ N 1-ի հիման վրա, սակայն այդ Հարկային հաշիվներում նույնիսկ պատվերների համարները չկան, նշված են Հավելված N 25 և Հավելված N 22, որպիսիք սակայն Պայմանագրում կամ Հանձնման-ընդունման ԱԿՏ N 1-ում բացակայում են:

Ըստ վերոնշյալ կետի 2.5.2-ի 16.06.2016թ. դուրս գրված Հարկային հաշվի համար Հանձնման-ընդունման ակտը կազմվել է 11.07.2016թ.-ին՝ գրեթե մեկ ամիս հետո:

27.10.2016թ., 02.11.2016թ., 10.11.2016թ., 23.02.2017թ., 11.04.2017թ., 26.04.2017թ., 18.05.2017թ. և 08.06.2017թ. հարկային հաշիվներում նշված գները չեն համապատասխանում պայմանագրային գներին, պայմանագրում չկան այդ հարկային հաշիվներում բերված գների հիմնավորումը:

Բոլոր Հարկային հաշիվներում մատակարարման ամսաթվերը չեն համապատասխանում կից Հանձնման-ընդունման ակտերում աշխատանքների կատարման ժամկետներին: Բացի այդ, թվով յոթ հարկային հաշիվների դուրսգրման ամսաթվերով և դրանց համապատասխան Ընդունման-հանձնման ակտերի հաստատման ժամկետներից երևում է, որ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը թույլ է տվել ՀՀ Ավելացված արժեքի հարկի մասին ՀՀ օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Այդ խախտումների համար նույն օրենքի 43-րդ հոդվածի 3)-րդ կետի «բ» ենթակետի դրույթներով հաշվարկվող տուգանքների ընդհանուր գումարը կազմում է առնվազն 764 240 ՀՀ դրամ, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2) կետով նախատեսված հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորությունները, որի դեպքում արգելվում է նման պարտավորություն ունեցող անձին մասնակցել գնումների ընթացակարգերին: Փաստորեն «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց փաստացի պարտավորություններ, որոնք սակայն կրել են չբացահայտված բնույթ, քանի որ հարկային մարմնի կողմից տեսչական ստուգումներ չեն կատարվել, իսկ առանց այդ ստուգումների՝ դրանց առկայությունը պարզելու հնարավորություն և միջոցներ հարկային մարմինը չի ունեցել: Սույն բողոքի սահմաններում «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն, առաջարկում է Գնումների բողոքարկման խորհրդին, դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, որպեսզի վերջինս «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող փաստաթղթերը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ժամկետանց պարտավորությունների մասով ստուգի և Գնումների բողոքարկման խորհուրդը ստուգման արդյունքները կիրառի սույն բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս:

Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ եթե նույնիսկ նույնականացնենք պղնձամոլիբդենային կոմբինատը գործող էլեկտրակայանի հետ (ինչը սակայն իրականում անհնարին է), ապա վերոնշյալ խախտումները, բազմաթիվ սխալները և անհամապատասխանությունները, առնվազն թույլ չեն տալիս, որպեսզի ներկայացված փաստաթղթերով կատարված աշխատանքները համարվեն պատշաճ կատարվածներ, որովհետև գնանշման հարցման հրավերով այլ փաստաղթերի ներկայացման պահանջ չի սահմանվել, իսկ որպեսզի պահանջված և «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող ներկայացված փաստաթղթերը համարվեն պատշաճ, ապա նախապես հայերենի բոլոր բացատրական բառարաններում «պատշաճ» բառի նշանակությունը պետք է փոխել:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 20-ի՝ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին ընտրված մասնակից ճանաչելու և նրան պայմանագիր կնքելու մասին առաջարկություն անելու վերաբերյալ որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.07.2017թ. ժամը 12:30-ի և 04.08.2017թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 25.07.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. **«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը 27.07.2017թ. թիվ 118-ԸԲ գրությամբ դիմել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝

խնդրելով ԳԲԽ-ԱՄ-2017/23 բողոքի քննության շրջանակներում «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչված «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին ներգրավվել որպես երրորդ կողմ:

Խորհուրդը 28.07.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարել է «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված միջնորդությունը:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը 28.07.2017թ. ժամը 12:30-ի Խորհրդի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում գործող էլեկտրակայաններում ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների կատարված լինելը: ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը որպես համանման պայմանագրեր ներկայացրել է երկու պայմանագրեր «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ կնքված, որոնցից՝ 06.05.2017թ. կնքված պայմանագրով ծառայության մատուցման ժամկետի ավարտ է սահմանվել 25.12.2017թ., այսինքն՝ նշված պայմանագիրը դեռ կատարման փուլում է, իսկ որպես 3-րդ համանման պայմանագիր ներկայացվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները հայտնեցին նաև, որ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի ծավալաթերթով նախատեսված աշխատանքները մասնակցել են, քանի որ գտնում են, որ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ունի հրավերով սահմանված աշխատանքների կատարման համար բավարար փորձառություն և, որ Ընթացակարգի հրավերով սահմանված գործող էլեկտրակայաններում կատարված աշխատանքի առկայությունը խտրական պահանջ է:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիները հայտնեցին, նաև որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն ունի էներգետիկ ենթակառուցվածքներ և Խորհրդին խնդրեցին իրենց տրամադրել ժամանակ, որպիսի կարողանան ներկայացնել բավարար ապացույցներ:

Խորհուրդը որոշեց 28.07.2017թ. ժամը 12:30-ի նիստը հետաձգել և «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրել մեկ շաբաթ ժամկետ:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ գրությամբ դիմել են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին, սակայն տվյալ պահին չունեն պատասխան և խնդրեցին տրամադրել ևս հավելյալ ժամկետ:

«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի ներկայացուցիչը նիստի ժամանակ հայտնեց, որ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը խնդրի կարգավորման նպատակով, այն է՝ արդյոք «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով կատարված աշխատանքները համարվում են գործող էլեկտրակայանում կատարված թե՝ ոչ, պետք է դիմի ոչ թե «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին, այլ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, քանի որ դա լիցենզավորված գործունեություն է և միայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կարող է հայտնել արդյոք լիցենզիա տրված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին էլեկտրական էներգիայի արտադրության, թե՝ ոչ:

Խորհուրդը որոշեց նիստը հետաձգել և կրկին ժամանակ տալ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է տրամադրել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի 03.08.2017թ. թիվ 418/1 տեղեկանքը, որտեղ նշված է, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի արտադրական և օժանդակ ենթակառուցվածքների շարքում առկա են նաև էներգետիկ նշանակության օբյեկտներ:

3. **<u>«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն 27.07.2017թ. թիվ 673 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.07.2017թ. ժամը 12:30-ի և 04.08.2017թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

Նիստի ժամանակ Խորհրդի այն հարցին թե արդյոք Պատվիրատուն «Էկոլոգա-նոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հայտը բավարար գնահատելով գործել է իրավաչափ, ներկայացուցիչները հայտնեցին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հայտը բավարար գնահատելով գործել է ոչ իրավաչափ, քանի որ վերջինիս հայտը հակասում է հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Ընթացակարգի Հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում գործող էլեկտրակայաններում ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների կատարված լինելը, իսկ «Էկոլոգա-նոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից որպես նմանատիպ պայմանագիր ներկայացվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը, որը չի կարող դիտարկվել որպես համանման պայմանագիր, քանի որ այն չի համարվում գործող էլեկտրակայանում կատարված աշխատանք:

4. **<u>ԳԲԽ-ԱՄ-2017/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲԽ-ԱՄ-2017/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը:

2. «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտի N 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ բավարարում է ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտի թիվ 4 հավելվածով՝ Ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով, ներկայացրել է գնային առաջարկ, որի ***ընդհանուր արժեքը կազմել է 11 837 952 ՀՀ դրամ:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.07.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով արձանագրվել է, որ ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը:

7. «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն»-ը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել են հետևյալը՝

- «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 17.06.2016թ. կնքված ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտություններ»-ի ծառայությունների մատուցման թիվ ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 2 139 600 ՀՀ դրամ:***
- «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 06.05.2017թ. կնքված ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի քիմիական

արտադրամասի ջրաքիմիական ռեժիմի վարման համար քիմիական նյութերի՝ ծծմբական թթվի և նատրիումի հիդրոքսիդի տեսակարար ծախսի հաշվարկում» ծառայությունների մատուցման թիվ ՀԱԷԿ-ՊԸԾՁԲ-11/17 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 10 457 280 ՀՀ դրամ:***

○ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև 03.06.2016թ. կնքված «Ջրի և/կամ հողի նմուշների փորձարկումներ» ծառայությունների մատուցման N 067 պայմանագիրը:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետով արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի, հայտը գնահատվել է բավարար և վերջինս հայտարարվել է ընտրված մասնակից:

9. Նույն արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետով արձանագրվել է, որ անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկություն անել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի 25.07.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը և Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող***

հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. ***Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված փվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:***

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

<< կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: ***Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ փվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,***

որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) ***մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 2.5-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով ***նմանատիպ են համարվում գործող էլեկտրակայաններում ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների կատարված լինելը*** (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության

նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Ընթացակարգի հրավերի Մաս Ի-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Ընթացակարգի հրավերի Մաս Ի-ի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպես, Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՇԳՑ թիվ 1 էներգաբլոկի ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտի N 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ բավարարում է ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտի թիվ 4 հավելվածով՝ Ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի մասով, ներկայացրել է գնային առաջարկ, որի ***ընդհանուր արժեքը կազմել է 11 837 952 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.07.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով արձանագրվել է, որ ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն»-ը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել են հետևյալը՝

- «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 17.06.2016թ. կնքված ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի առհոս ջրի երկու հոսքից թթվածնի կենսաբանական և քիմիական պահանջարկի և նավթամթերքների հետազոտություններ»-ի ծառայությունների մատուցման թիվ ՀԱԷԿ-ԲԸԾՁԲ-1/16 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 2 139 600 ՀՀ դրամ:***
- «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 06.05.2017թ. կնքված ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի քիմիական արտադրամասի ջրաքիմիական ռեժիմի վարման համար քիմիական նյութերի՝ ծծմբական թթվի և նատրիումի հիդրոքսիդի տեսակարար ծախսի հաշվարկում» ծառայությունների մատուցման թիվ ՀԱԷԿ-ՊԸԾՁԲ-11/17 պայմանագիրը, ***որի ընդհանուր արժեքը կազմել է 10 457 280 ՀՀ դրամ:***
- «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև 03.06.2016թ. կնքված «Ջրի և/կամ հողի նմուշների փորձարկումներ» ծառայությունների մատուցման N 067 պայմանագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետով արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների

կենտրոն» ՊՈԱԿ-ի, հայտը գնահատվել է բավարար և վերջինս հայտարարվել է ընտրված մասնակից:

Նույն արձանագրության 1-ին կետի 3-րդ ենթակետով արձանագրվել է, որ անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկություն անել «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին:

«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն 25.07.2017թ. բողոքով Խորհրդին հայտնել է, որ «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հակասելով իր իսկ կողմից «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված պայմաններին, որպես նմանատիպ է համարել «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև կնքված 03.06.2016թ. N 067 պայմանագրով կատարված աշխատանքները, մինչդեռ՝ Ընթացակարգի Հրավերով ***նմանատիպ են համարվում գործող էլեկտրակայաններում*** ընդհանուր առհոս ջրի լրիվ անալիզի աշխատանքների կատարված լինելը, իսկ ***«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն գործող էլեկտրակայան չի հանդիսանում***:

ԳԲԽ-ԱՄ-2017/23 բողոքի քննության նիստի ժամանակ Խորհրդի այն հարցին թե արդյոք Պատվիրատուն «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հայտը բավարար գնահատելով գործել է իրավաչափ, Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնեցին, որ ընդունում են բողոքաբերի վերը նշված փաստարկը և, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հայտը բավարար գնահատելով գործել է ոչ իրավաչափ, քանի որ վերջինիս հայտը հակասում է հրավերի պահանջներին:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները նիստի ժամանակ հայտնեցին, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն ունի էներգետիկ ենթակառուցվածքներ և Խորհրդին խնդրեցին իրենց տրամադրել ժամանակ, որպիսի կարողանան ներկայացնել բավարար ապացույցներ:

Խորհուրդը որոշեց 28.07.2017թ. ժամը 12:30-ի նիստը հետաձգել և «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրել մեկ շաբաթ ժամկետ:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները, մասնակցելով 04.08.2017թ. ժամը 11:00-ի Խորհրդի հաջորդ նիստին, հայտնեցին, որ գրությամբ դիմել են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին, սակայն տվյալ պահին չունեն պատասխան և խնդրեցին տրամադրել ևս հավելյալ ժամկետ: Միաժամանակ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը խնդրի կարգավորման նպատակով, այն է՝ արդյոք «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով կատարված աշխատանքները համարվում են գործող էլեկտրակայանում կատարված թե՝ ոչ, պետք է դիմի ոչ թե «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին, այլ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, քանի որ դա լիցենզավորված գործունեություն է և միայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կարող է հայտնել արդյոք լիցենզիա տրված է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին էլեկտրական էներգիայի արտադրության, թե՝ ոչ:

«ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է տրամադրել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից տրված 03.08.2017թ. թիվ 418/1 տեղեկանքը, որտեղ նշված է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի արտադրական և օժանդակ ենթակառուցվածքների շարքում առկա են նաև էներգետիկ նշանակության օբյեկտներ:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված փաստերը, Խորհուրդը արձանագրում է, որ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին և չի դիտարկվում որպես նմանատիպ, ուստի Պատվիրատուն այն բավարար գնահատելով խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 2.5-րդ և Մաս I-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետերով սահմանված պահանջները:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրեր, որոնցից՝ 06.05.2017թ.

կնքված N 02/062 պայմանագրի կատարման վերաբերյալ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը որևէ տվյալ չի ներկայացրել, հետևաբար այն չի կարող դիտարկվել որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հավաստող բավարար փաստաթուղթ, քանի որ Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ինչ վերաբերում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ կնքված 17.06.2016թ. № 03/134 պայմանագրին, որի ընդհանուր արժեքը կազմել է ***2 139 600 ՀՀ դրամ,*** ապա Խորհուրդն արձանագրում է, որ գումարային արտահայտությամբ, պայմանագիրը չի համապատասխանում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջին, որի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Էներգակարգաբերում» ՓԲԸ-ի կողմից 25.07.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «ԵՐՋԷԿ ԳՀԱՇՁԲ 14/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 20-ի՝ «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին ընտրված մասնակից ճանաչելու և նրան պայմանագիր կնքելու մասին առաջարկություն անելու վերաբերյալ որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ